Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 նոյեմբերի 2025 թվականի N 2488

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ
2117 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 08 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 2117 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 08 սեպտեմբերի 2025 թվականի «Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոց թիվ 23 բազմաբնակարանային շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը հաստատելու մասին» թիվ 2117 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

1. Որոշման վերնագիրը «հաստատելու» բառից հետո լրացնել «և գործառնական նշանակությունը փոխելու» բառերով:
2. Որոշման նախաբանը «ղեկավարվելով» բառից հետո լրացնել «ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով» բառերով:
3. Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ կետով՝
«Փոխել 1003.7քմ մակերեսով հողամասից 11.3քմ մակերեսով 06-001-0443-0041 կադաստրային ծածկագրով հողամասի գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 նոյեմբերի 2025 թվականի N 2489

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4 ԱԾԽԱՀԱՏՆԵՐԻ
ԹԱՂԱՄԱՍ 18/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀՈՂԱՄԱՍԻ
ԸՆԴՀԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԱՐԳԱՐԻՏ ԱՐԱՄԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարգարիտ Արամի Մուրադյանի 06.10.2023թ. թիվ 02/17199 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 30052025-06-0033 և Մարգարիտ Արամի Մուրադյանի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 08092021-06-0020 վկայականները, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 28 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ կետերով և 2-րդ մասով և ՀՀ կառավարության 26 մայիսի 2016 թվականի թիվ 550-Ն որոշումով՝ որոշում եմ.

1. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Տարոն-4 Ածխահատների թաղամաս 18/1 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող 63.1քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 30052025-06-0033 վկայականի, հողի կադաստրային արժեքով՝ 280280 (երկու հարյուր ութսուն հազար երկու հարյուր ութսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Մարգարիտ Արամի Մուրադյանին՝ հողամասի ընդլայնման նպատակով:

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Մարգարիտ Արամի Մուրադյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 63.1քմ մակերեսով հողամասի առավաճառքի պայմանագիր, իսկ համայնքի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերինշալ պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 նոյեմբերի 2025 թվականի N 2490

«ԴԻԱՆՆԱ ՄՈՍԻՆՅԱՆ ԱՇՈՏԻ» ԱՆՀԱՏ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՎԱՐՉԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի սպասարկման և տրանսպորտի բաժնի կողմից կազմվել է արձանագրություն և զեկուցագիր, որի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձորի համայնքապետարանի առևտրի սպասարկման և տրանսպորտի բաժնի կողմից 20.10.2025 թվականի կազմված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ «Դիաննա Մոսինյան Աշոտի» անհատ ձեռնարկատիրոջ գործող օբյեկտում (ՀՎՀՀ՝ 67107952, հաշվառման հասցե՝ գ. Գուգարք Էներգետիկների 3 փողոց, տնակ 2/1, գործունեության հասցե՝ ք. Վանաձոր, Աբովյան փողոց թիվ 104) բացակայում է համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման 2025 թվականի երրորդ եռամսյակի համար համապատասխան թույլտվությունը:

Հարուցված վարչական վարույթի հիման վրա 2025 թվականի հոկտեմբերի 31-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին «Դիաննա Մոսինյան Աշոտի» անհատ ձեռնարկատերը պատշաճ ծանուցվել, սակայն վարչական վարույթի լսումներին չի ներկայացել (փոստային առաքման ծանուցման կտրոն թիվ LO130199981AM, որի հետադարձ կտրոնը մեր կողմից չի ստացվել) և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի 15-րդ կետի համաձայն՝ միաժամանակ ծանուցումը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության իրավաբանական ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Սույն մասով նախատեսված գործողությունները կատարելուց հետո՝ հինգերորդ օրը, համապատասխան ծանուցումները համարվում են հանձնված (ստացված): Այսպիսով «Դիաննա Մոսինյան Աշոտի» անհատ ձեռնարկատերը վարչական վարույթի

լսումներին պատշաճ ծանուցվել է և չի ներկայացել (<< ինտերնետային ծանուցման պաշտոնական կայք «azdarar»):

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» << օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ունեցվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» << օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» << օրենսգրքի 32-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» << օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» << օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» << օրենսգրքի 169.16.-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ առանց թույլտվության հանրային սննդի կազմակերպումը և իրացումը՝ առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» << օրենսգրքի 2191-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են օրենսգրքի 169.16.-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» << օրենսգրքի 40-րդ, 169.16.-րդ հոդվածի 7-րդ մասով, 2191-րդ, 245-րդ, 279-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» << օրենքի 29.1. հոդվածով, 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» << օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով.

ՈՐՈՇԵՑԻ

1. «Դիաննա Մոսինյան Աշոտի» անհատ ձեռնարկատիրոջը ենթարկել վարչական պատասխանատվության՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» << օրենսգրքի 169.16.-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք՝ 80.000 (ութսուն հազար) << դրամ:

2. Պարտավորեցնել «Դիանա Մոսինյան Աշոտի» անհատ ձեռնարկատիրոջը տուգանքի գումարը վճարել 900235401537 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:
5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
7. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 19
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 նոյեմբերի 2025 թվականի N 2491

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ 1Ա
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, «ԲԱՐՁՐԱՎՈՒՆՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ, 17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ
ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԻՎ 2166 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿԱՐՅՐԱԾ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության
«ԲԱՐՁՐԱՎՈՒՆՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի պարտականությունները
կատարող Դավիթ Միրզոյանի 24/03/2025 թվականի թիվ 04/22.1/1287-2025 գրությամբ
անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10022023-06-0054
վկայականը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 29.12.2023թ. տրված հաշվառման
(չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման
ծածկագիր: 2023CRZ4RN), «ԱՐՄԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ» ԱԶ-կողմից տրված 15.08.2024թ.
եզրակացությունը, 28.12.2023թ. տեղեկանքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման
մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական
ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով,
«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ
կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի
9-րդ, 10-րդ, 11-րդ, 17-րդ կետերով, 18-րդ կետի ա) ենթակետով, ՀՀ կառավարության
29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով՝ որոշում եմ.

1. Ճանաչել օրինական Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոց 1Ա հասցեում գտնվող,
«ԲԱՐՁՐԱՎՈՒՆՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող
արտադրական տարածքում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը
չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող,
ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս,
առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և
հարկադիր սերվիսուտ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնական կառուցված 173.90քմ
ընդհանուր մակերեսով արտադրական ծածկը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 173,90քմ ընդհանուր մակերեսով արտադրական
նշանակության ծածկի օրինականացման համար սահմանված վճարը՝ 436410 (չորս հարյուր

երեսունվեց հազար չորս հարյուր տասը) ՀՀ դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

3. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Կ. Դեմիրճյան փողոց, 1Ա հասցեին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Կ. Դեմիրճյան փողոց, 2/12 արտադրամաս:

4. Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի համայնքի ղեկավարի 17 սեպտեմբերի 2024 թվականի «Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Կ.Դեմիրճյան փողոց 1ա հասցեում գտնվող, «ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» փակ բաժնետիրական ընկերության սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված արտադրական նշանակության շինություններն օրինականացնելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 2166 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

2025թ. նոյեմբերի 19
ք. Վանաձոր



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 նոյեմբերի 2025 թվականի N 2492

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ ՓՈՂ. ՓԱԿ. 3
ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՋԲ ՅՈՒՐԻԿ ՀԱՅԿԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Յուրիկ Հայկի Բարսեղյանի (ծնված՝ 06.08.1956 թ.) 01.09.2025 թվականի թիվ 02/12532 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը (259844), 22.05.1992 թվականի անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, «Գասպար Վեքիլյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունը, 12.09.2025 թվականին «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-222/25 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Սունդուկյան փող. փակ. 3 հասցեում կառուցված բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 189.5քմ և նրան կից 179.9քմ մակերեսով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1989թ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 369.4քմ, որը ընդհանուր բաժնային սեփականություն է Յուրիկ Հայկի Բարսեղյանի (1/3), Արամ Անդրանիկի Բարսեղյանի (1/3) և Աշոտ Սուրենի Բարսեղյանի (1/3) միջև:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Յուրիկ Հայկի Բարսեղյանի սեփականության իրավունքը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Սունդուկյան փող. փակ. 3 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 189.5քմ մակերեսով հողամասին կից 179.9քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

369.4 քմ մակերեսով հողամասը ընդհանուր բաժնային սեփականություն է Յուրիկ Հայկի Բարսեղյանի (1/3), Արամ Անդրանիկի Բարսեղյանի (1/3) և Աշոտ Սուրենի Բարսեղյանի (1/3) միջև:

2. Ճանաչել Յուրիկ Հայկի Բարսեղյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Սունդուկյան փող. փակ. 3 հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 369.4քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ՝ համաձայն «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱԶ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Գ. Սունդուկյան փողոց, 1-ին փակուղի, 3/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 19
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 նոյեմբերի 2025 թվականի N 2493

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՐՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ, 2-րդ
ՓԱԿՈՒՂԻ 9 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽԱԶԻԿ ԽԱԼԱԹԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Խաչիկ Խալաթի Մարտիրոսյանի 13.08.2025 թվականի թիվ 02/11473 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /253773/, 10.06.2025 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3048 (843-20250610-84-9079525) և թիվ 3050 (843-20250610-84-9079603) վկայագրերը, 23.07.1990 թվականին տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, «Տարոն Վարդանյան Արտուրի» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը և եզրակացությունը, 06.08.2025թ. ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր:2025G9QAYR), 07.08.2025 թվականին «Նարինե Ասատրյան» ԱԶ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ 82-001123 եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Աբովյան փողոց, 2-րդ փակուղի թիվ 9 հասցեում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 212.9 քմ մակերեսով հողամասը և դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1959-1991թթ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 212.9քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Խաչիկ Խալաթի Մարտիրոսյանին սեփականության իրավունքը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Աբովյան փողոց, 2-րդ փակուղի թիվ 9 հասցեի 212.9քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Արփյան փողոց, 2-րդ փակուղի թիվ 9 հասցեում գտնվող գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք Վանաձոր ք., Ա. Արփյան փողոց, 2-րդ փակուղի, 9 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 19
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հտ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 նոյեմբերի 2025 թվականի N 2494

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 13 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ
1937 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սիրամարգ Արամայիսի Գրիգորյանի 25.04.2025 թվականի թիվ 02/5743 դիմումը, 02.09.2025 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-02092025-06-0112 որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 13 օգոստոսի 2025 թվականի թիվ 1937 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 13 օգոստոսի 2025 թվականի « Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Բուլղարական 1-ին ավան թիվ 33 (պայմանական) հասցեի բնակելի տանը կից հողամասի և շինությունների նկատմամբ Սիրամարգ Արամայիսի Գրիգորյանի և Դիանա Գևորգի Գրիգորյանի սեփականության իրավունքը ճանաչելու, հողամասի ճշտված սահմանները հաստատելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1937 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Որոշման 1-ին կետում «Սիրամարգ Արամայիսի Գրիգորյանի» բառերը փոխարինել «Սիրամարգ Արամայիսի Գրիգորյանի (1/2)» բառերով և «Դիանա Գևորգի Գրիգորյանի» բառերը փոխել «Դիանա Գևորգի Գրիգորյանի (1/2)» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 նոյեմբերի 2025 թվականի N 2495

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔՈՒՄ (ԾԱԾԿԱԳԻՐ: 06-031-0027-0015) ԳՏՆՎՈՂ ԱՐՄԻԿ ԳՐԻԳՈՐԻ ԲԵԳԼԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմիկ Գրիգորի Բեգլարյանի 13.09.2024թ. թիվ 02/15660 դիմումը, 21.11.1991թ. Լոռու մարզի Գուգարք համայնքում հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի թիվ 11 որոշման 19.09.2024թ. տրված հողհատկացման քաղվածքը և ցուցակը, «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 16-րդ մասով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Վերականգնել Արմիկ Գրիգորի Բեգլարյանի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի գյուղ Գուգարքում գտնվող, 0.04 հա մակերեսով հողամասի հողհատկացման հիմքերը:

2. Հաստատել Վանաձոր համայնքի գյուղ Գուգարքում (ծածկագիր: 06-031-0027-0015) գտնվող 0.04 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

3. Վանաձոր համայնք գյուղ Գուգարքում գտնվող (ծածկագիր: 06-031-0027-0015) հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք Քոթեջային 7-րդ փողոց, 8 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 նոյեմբերի 2025 թվականի N 2496

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2258 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 12 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2445 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռաֆիկ Զիվանի Խաչատրյանի 05.11.2025թ. թիվ 02/16669 դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 16 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2258 որոշում, 29/10/2025 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-29102025-06-0121 որոշումը, «ԻՆԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի նոր հատակագիծը, մասնագիտական եզրակացությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 16 հոկտեմբերի 2025 թվականի «Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Նար-Դուսի փողոց թիվ 25 հասցեի բնակելի տանը կից հողամասի և շինությունների նկատմամբ Ռաֆիկ Զիվանի Խաչատրյանի և Ռաֆիկ Զիվանի Խաչատրյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը ճանաչելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 2258 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1.16 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2258 համայնքի ղեկավարի որոշման հավելվածը փոխարինել համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հավելվածով:

2. Որոշման նախաբանում և 1-ին կետերում «387.0քմ » բառերը փոխարինել «384.65քմ» բառերով:

3. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 12 նոյեմբերի 2025 թվականի «Վանաձոր համայնքի ղեկավարի 16 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2258 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» 2445 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 նոյեմբերի 2025 թվականի N 2497

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ 16/2
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԼԵԿՈՆ
ՍՈՒՐԵՆԻ ԿՈՌՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լևոն Սուրենի Կոռյանի 19.12.2023թվականի թիվ 02/22733 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20052025-06-0088 վկայականը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝
որոշում եմ.

1. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա 16/2 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 17.9 քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 17.3քմ) ավտոտնակը 57390 (հիսունյոթ հազար երեք հարյուր իննսուն) ՀՀ դրամ և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 17.9քմ մակերեսով հողամասը 289570 (երկու հարյուր ութսունինը հազար հինգ հարյուր յոթանասուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Լևոն Սուրենի Կոռյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Լևոն Սուրենի Կոռյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 նոյեմբերի 2025 թվականի N 2498

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ 16/4
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԼԵՎՈՆ
ՍՈՒՐԵՆԻ ԿՈՌՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լևոն Սուրենի Կոռյանի 19.12.2023թվականի թիվ 02/22731 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 21052025-06-0050 վկայականը, 13.05.2024թ.. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա 16/4 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 20.0 քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 19.1քմ) ավտոտնակը 64120 (վաթսունչորս հազար հարյուր քսան) ՀՀ դրամ և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 20.0քմ մակերեսով հողամասը 323540 (երեք հարյուր քսաներեք հազար հինգ հարյուր քառասուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Լևոն Սուրենի Կոռյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Լևոն Սուրենի Կոռյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 նոյեմբերի 2025 թվականի N 2499

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ 1/4
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԷԴԳԱՐ
ՌՈՄԱՆՈՍԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էդգար Ռոմանոսի Սարգսյանի 01.12.2023թվականի թիվ 02/21346 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 19052025-06-0028 վկայականը, 13.05.2024թ.. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Վ. Համբարձումյան փողոց, 1/4 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 28.7քմ արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 28.2քմ) ավտոտնակը 56520 (հիսունվեց հազար հինգ հարյուր քսան) ՀՀ դրամ և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 28.7քմ մակերեսով հողամասը 127480 (հարյուր քսանյոթ հազար չորս հարյուր ութսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Էդգար Ռոմանոսի Սարգսյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Էդգար Ռոմանոսի Սարգսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 19
Ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 նոյեմբերի 2025 թվականի N 2500

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ, 68/11
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԱՄՎԵԼ
ՋԱՆԻԲԵԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սամվել Զանիբեկի Խաչատրյանի 04.12.2023 թվականի թիվ 02/21452 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20062025-06-0013 վկայականը, 13.05.2024թ.. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի, 68/11 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 42.40քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 41.0քմ) ավտոտնակը 70940 (յոթանասուն հազար ինը հարյուր քառասուն) ՀՀ դրամ և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 42.40քմ մակերեսով հողամասը 122430 (հարյուր քսաներկու հազար չորս հարյուր երեսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Սամվել Զանիբեկի Խաչատրյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Սամվել Զանիբեկի Խաչատրյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 19
Ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հտ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 նոյեմբերի 2025 թվականի N 2501

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔՈՒՄ (ԾԱԾԿԱԳԻՐ: 06-031-0061-0068) ԳՏՆՎՈՂ ԱՆԴՐԱՆԻԿ ՎՐՈՒՅՐԻ ԱՇՈՒՂՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անդրանիկ Վրույրի Աշուղյանի 17.09.2024թ. թիվ 02/15788 դիմումը, 21.11.1991թ. Լոռու մարզի Գուգարք համայնքում հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի թիվ 11 որոշման 19.09.2024թ. տրված հողատկացման քաղվածքը և ցուցակը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 16-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, **որոշում եմ.**

Վերականգնել Անդրանիկ Վրույրի Աշուղյանի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի գյուղ Գուգարքում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 0.09հա մակերեսով հողամասի հողատկացման հիմքերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 19
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 նոյեմբերի 2025 թվականի N 2502

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՈՍԿՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ
52/20 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԷՄԻԼ
ՌԱՖԻԿԻ ՅԱՎՐՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էմիլ Ռաֆիկի Յավրյանի 09.07.2025թ. թիվ 9603 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 03102025-06-0030 վկայականը, 26.04.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 33 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի գ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Մոսկովյան փողոց 52/20 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 20.88քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 20.05քմ) ավտոտնակը և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 29.7քմ մակերեսով հողամասը 10 տարի ժամկետով, վարձակալության իրավունքով տրամադրել Էմիլ Ռաֆիկի Յավրյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Էմիլ Ռաֆիկի Յավրյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի վարձակալության իրավունքի պայմանագիր, ավտոտնակի 1.0քմ-ի համար ամսական վարձավճարի չափ սահմանելով 20 /քսան/ դրամ, իսկ հողամասի 1.0քմ-ի համար ամսական 24 /քսանչորս/ դրամ, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 19
Ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 նոյեմբերի 2025 թվականի N 2503

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Պ. ՊՈՌՇՅԱՆ ՓՈՂՈՑ 4/3
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱԼԼԱ
ԱՐՄՈՒՍԻԿԻ ՄԱՂԱՔՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալլա Արմուսիկի Մաղաքյանի 26.09.2023 թվականի թիվ 02/16418 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26082025-06-0053 վկայականը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝
որոշում եմ.

1. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Պ. Պորշյան փողոց 4/3 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 37.93քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 30.46քմ) ավտոտնակը 74690 (յոթանասուներորս հազար վեց հարյուր իննսուն) ՀՀ դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 37.93քմ մակերեսով հողամասը 168480 (հարյուր վաթսուներորս հազար չորս հարյուր ութսուն) ՀՀ դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Ալլա Արմուսիկի Մաղաքյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Ալլա Արմուսիկի Մաղաքյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 19
Ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 նոյեմբերի 2025 թվականի N 2504

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔՈՒՄ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ:
06-031-0222-0050) ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՈՒՍԱՆ ԿՈԼՅԱՅԻ
ԱՄԻՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ
ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 23 ՀՈՒԼԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1723 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուսան Կոլյայի Ամիրյանի (ծնված՝ 01.06.1968թ.) 08.10.2025թ. թիվ 02/14936 դիմումը, 21.11.1991թ. Լոռու մարզի Գուգարք համայնքում հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի թիվ 11 որոշման 17.09.2024թ. տրված հողատկացման քաղվածքը և ցուցակը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, 21.06.2024թ. տրված թիվ 3678 (նոտարական ակտի կոդ: 741-20240621-90-8055560) լիազորագիրը, 15.04.2025 թվականի ըստ օրենքի ժառանգության վկայագիրը (նոտարական ակտի կոդ: 763-20250410-84-8915180), 15.04.2025 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 2270 վկայագիրը (նոտարական ակտի կոդ: 763-20250410-84-8915164), ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 30.07.2025 թվականին տրված գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-30072025-06-0021 որոշումը, և հաշվի առնելով այն, որ գյուղ Գուգարքում (կադաստրային ծածկագիր: 06-031-0222-0050) գտնվող 0.184921 հա մակերեսով հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ մասով, ՀՀ կառավարության 31.12.1998թ.-ի թիվ 867 որոշման կարգի 3-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածներով՝ որոշում եմ.

1. Հաստատել Վանաձոր համայնք, գյուղ Գուգարքում (կադաստրային ծածկագիր: 06-031-0222-0050) գտնվող 0.184921 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի: Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

2. Ճանաչել Սուսան Կոլյայի Ամիրյանի (ծնված՝ 01.06.1968թ.) սեփականության իրավունքը Վանաձոր համայնք, գյուղ Գուգարքում (կադաստրային ծածկագիր: 06-031-0222-0050)

գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, 0.184921 համակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասի նկատմամբ՝ համաձայն «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագծի:

3. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 23 հուլիսի 2025 թվականի «Վանաձոր համայնք գյուղ Գուգարքում գտնվող (ծածկագիր: 06-031-0222-0050) Սուսան Կոլյայի Ամիրյանին պատկանող հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու, հողամասի ճշտված սահմանները հաստատելու մասին» թիվ 1723 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 19
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 նոյեմբերի 2025 թվականի N 2505

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի «ՎԱՆԱՁՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 655 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնքի ղեկավարի 2025 թվականի մարտի 12-ի «Վանաձոր համայնքի ղեկավարի 2025 թվականի գնումների պլանը հաստատելու մասին» թիվ 655 որոշման հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. նոյեմբերի 19
Ք. Վանաձոր

Հավելված
Հաստատում են
Հանձնող համայնքի ղեկավարի
պաշտոնակատար՝



Ա. Փելեշյան
որոշում
2025թ.

Պատվիրատուն Վանաձոր համայնք								
Անվանումը 2025թ. Գնումների պլանի լրացում 35								
Ֆինանսավորման աղբյուրը Վանաձոր համայնքի 2025թ. բյուջե								
Միջանցիկ կոդը՝ ըստ ԳՄԱ դասակարգման	Ապրանքների, ծառայությունների և աշխատանքների անվանումը	Գնման ձևը(ընթացակարգը)	Չափման միավորը	Միավորի գինը	Քանակը	Գումարը (հազար) դրամ		
1	2	3	4	5	6	7		
Բաժին -01 խումբ -1 դաս-1 Աշխատակազմի պահպանման ծախսեր								
կապի ծառայություններ/հոդված 4214/								
72411100	ինտերնետ կապի ծառայությունների ձեռքբերում	ՄԱ	դրամ	998000	1	998.00		
կոմունալ ծառայություններ /հոդված-4213/								
50321700	դեռատիզացիա և դեզինֆեկցիա	ՄԱ	դրամ	420000	1	420,00		
բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ								
45111240	Վանաձոր համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառույցների ապամոնտաժման աշխատանքների ձեռքբերում	ԳՀ	դրամ	4996740	1	4996,74		
Տրանսպորտային նյութեր, այդ թվում՝								
Վառելիք/հոդված-4264/								
09132200	բենզին (ոեգուլյար)	ԷԱԾ	լիտր	436,1	19500	8503,95		
09411710	սեղմված բնական գազ	ԷԱԾ	կգ	310	5034	1560,54		
Ծառայություններ /հոդված 4231/								
79821170	Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար այլ տպագրական ծառայություններ	ՄԱ	դրամ	957474	1	957,47		
98391200	Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար ընդհանուր բնույթի այլ վարչական ծառայություններ	ՄԱ	դրամ	905510	1	905,51		
79531100	Գրավոր թարգմանության ծառայություններ	ՄԱ	դրամ	950000	1	950		
համակարգչային ծառայություններ /հոդված 4232/								
72261180	<E Community - Համայնքների եկամուտների կառավարման> էլեկտրոնային համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություններ							
72261180	<E Community - Համայնքների եկամուտների կառավարման> էլեկտրոնային համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություններ	ՄԱ	դրամ	15312000	1	15312,00		

72261110	համակարգչային ծրագրերի ուղեկցում և սպասարկում	ՄԱ	դրամ	130000	1	130.0	
	Վանաձորի համայնքապետարանի 2025թ. կարիքների համար համակարգչային ծրագրային սպասարկման ծառայություններ						
72261180	Վանաձորի համայնքապետարանի 2025թ. կարիքների համար համակարգչային ծրագրային սպասարկման ծառայություններ	ՄԱ	դրամ	960000	1	960.00	
50311120	Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար համակարգչային տեխնիկայի վերանորոգման և ապահովման ծառայություններ	ՄԱ	դրամ	996000	1	996.00	
	Ծառայություններ /հոդված 4233/						
79631200	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություն	ՄԱ	դրամ	360000	1	360.00	
	կառավարչական ծառայություններ/հոդված 4235/						
79211150	Աուդիտորական ծառայություններ	ԳՀ	դրամ	*	1	*	
79211150	Աուդիտորական ծառայություններ	ԳՀ	դրամ	1788000	1	1788.00	
	Ծառայություններ /հոդված 421522/						
66511120	Վանաձորի համայնքապետարանի թվով 189 աշխատակիցների առողջության ապահովագրման ծառայությունների ձեռքբերում	ԳՀ	դրամ	30000000	1	30000.00	
	Վանաձոր համայնքի կարիքների համար շենքերի տեխնիկական վիճակի եզրակացություններ /հոդված 4239/						
71631140	Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի վարչական շենքի տեխնիկական վիճակի եզրակացություն	ՄԱ	դրամ	110500	1	110.5	
71631140	Վանաձոր համայնքի «Վանաձորի Էդուարդ Կզարթմյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի շենքի տանիքի կրողականության տեխնիկական վիճակի եզրակացություն	ՄԱ	դրամ	110500	1	110.5	
71631140	Վանաձոր համայնքի Վանաձորի քաղաքապետարանի վարչական շենքի տեխնիկական վիճակի եզրակացություն	ՄԱ	դրամ	110500	1	110.5	
71631140	Վանաձոր համայնքի «Վանաձորի թիվ 15 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի տանիքի կրողականության տեխնիկական վիճակի եզրակացություն	ՄԱ	դրամ	110500	1	110.5	
